



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 սեպտեմբերի 2021 թվականի N 1517 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ սոր՝ 4.1-ին կետով.

«4.1. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում գործնական պարապմունքների անցկացման ուղղություններն են՝

- 1) տարահանում.
- 2) պատսպարում.
- 3) անհատական պաշտպանության միջոցների կիրառում.
- 4) անվտանգության վարքականոնների կիրառում երկրաշարժի դեպքում.
- 5) անվտանգության վարքականոնների կիրառում հրդեհի դեպքում.
- 6) անվտանգության վարքականոնների կիրառում այլ արտակարգ իրավիճակների դեպքում.
- 7) հրդեհաշիջման միջոցների և սարքավորումների կիրառում.
- 8) հրդեհաշիջման իրականացում.
- 9) առաջին օգնության ցուցաբերում.
- 10) առաջին հոգեբանական աջակցության ցուցաբերում.
- 11) փրկարարական գործ.
- 12) տրանսպորտային, հրշեջ-փրկարարական և հատուկ տեխնիկայի շահագործում.
- 13) կապի ապահովում.
- 14) հետախուզություն/իրավիճակի գնահատում.
- 15) ականազերծման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության կանոնների պահպանում.
- 16) արդյունաբերական պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության կանոնների պահպանում.
- 17) բարձրության վրա աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության կանոնների պահպանում.
- 18) կրակային և հրդեհավտանգ այլ աշխատանքների կատարման ժամանակ հրդեհային անվտանգության կանոնների պահպանում.
- 19) «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում գործողությունները.
- 20) «Ուշադրություն բոլորին» ազդանշանի դեպքում գործողությունները.

21) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում գործնական պարապմունքների անցկացման այլ ուղղություններ:».

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին ենթակետով.

«11.1) **գործնական պարապմունք**՝ ուսուցանվողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացման ուսուցման և պատրաստման ձև (անհրաժեշտության դեպքում կարող է համատեղ իրականացվել համապատասխան մասնագիտական կառույցների հետ՝ վերջիններիս դիմելու և համաձայնության պարագայում).».

3) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 6-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին ենթակետով.

«8.1) գործնական պարապմունք.».».

4) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 7-րդ կետը «սեմինարներին» բառից հետո լրացնել «, գործնական պարապմունքներին» բառերով.

5) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 8-րդ կետը «վարժանքներում» բառից հետո լրացնել «, գործնական պարապմունքներում» բառերով.

6) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15. Լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ու կազմակերպություններին ներկայացնում է առաջարկություններ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում պատրաստման և բնակչության ուսուցման վերաբերյալ:».

7) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին կետով.

«

8.1.	Գործնական պարապմունք	ըստ անհրաժեշտության	մինչև 2 ժամ	լիազորված մարմին	ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարների որոշմամբ/հրամաններով	ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, կազմակերպությունների ղեկավարներ	ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ներկայացուցիչներ
		ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարների որոշմամբ/հրամաններով		ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, կազմակերպությունների ղեկավարներ		ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ներկայացուցիչներ	

».

8) որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված NN 1 և 2 հավելվածների ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն», «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն» բառերը և դրանց հոլովածները համապատասխանաբար փոխարինել «Ոստիկանություն», «Ազգային անվտանգության ծառայություն» բառերով և դրանց հոլովածներով.

9) որոշման 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության» բառերը փոխարինել «Արտակարգ իրավիճակների նախարարության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

Երևան